



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՐԶՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ
համայնք, Գ.ԱՐԶՈՒՏ, Հեռ. 093 19 91 34 ,
arjut.lori@mta.gov.am

N ԳԱ71
11 ապրիլ 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆՅԱՆԻՆ

Կից Ձեզ ենք ներկայացնում Արջուտ համայնքի ավագանու թիվ 16-18
որոշումները:

11.04.2018

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԶՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

09 ապրիլի 2018թվական, թիվ 16 -Ա

**ԱՐԶՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 09-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արջուտ համայնքի ավագանու 2018թվականի ապրիլի 09-ի նիստի օրակարգը:

Օրակարգ՝

1. Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
2. Արջուտ համայնքի բյուջեի 2018 թվականի առաջին եռամսյակի կատարողականի քննարկման մասին:

Ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Բարսյան Տիգրան	<i>[Signature]</i>		
Դալլաբյան Վազգեն	<i>[Signature]</i>		
Խոյեցյան Հովհաննես	<i>[Signature]</i>		
Մկրտչյան Սաթենիկ	<i>[Signature]</i>		
Շահինյան Անդրանիկ	<i>[Signature]</i>		

Համայնքի ղեկավար՝

Վ.Մկրտչյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

09 ապրիլի 2018թվական, թիվ 17 -Ա

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 04.04.2018թ, թիվ 65 դրական եզրակացությունը, համայնքի ավագնիս որոշում է՝

1. Լոռու մարզի Արջուտ համայնքի վարչական տարածքում գտնվող, Կարապետ Լալայանի սեփականություն հանդիսացող 0.5 հեկտար գյուղատնտեսական նշանակության վարելահողից 0.2674 հա վարելահող /կադաստրային ծածկագիր՝ 06-019-0124-0001/ փոխադրել հատուկ պահպանվող տարածքների հողերի նպատակային նշանակության, պատմական և մշակութային հողերի գործառնական նշանակության՝ հուշագրոսայգի, հուշահամալիր և մատուռ կառուցելու նպատակով:
2. Պարտավորեցնել Կարապետ Լալայանին համայնքային բյուջե վճարել հողամասի ներկա պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը, որը կազմում է 292135 դրամ:
3. Առաջարկել համայնքի ղեկավար Վ.Մկրտչյանին ապահովել իրավունքների պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում և համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն:

Ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Բաբայան Տիգրան	<i>Բաբայան</i>		
Դավթյան Վազգեն	<i>Դավթյան</i>		
Խոյեցյան Հովհաննես	<i>Խոյեցյան</i>		
Մկրտչյան Սաթենիկ	<i>Մկրտչյան</i>		
Շահինյան Անդրանիկ	<i>Շահինյան</i>		

Համայնքի ղեկավար



Վ.Մկրտչյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

09 ապրիլի 2018թվական, թիվ 18 -Ա.

**ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է՝

Ընդունել ի գիտություն ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի 2018թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման հաղորդումը՝ առ 01.04.2018թվական.

1. Եկամուտների գծով – 7340.8 հազար դրամ

Այդ թվում՝

--վարչական բյուջեի մասով – 7340.8 հազար դրամ

--ֆոնդային բյուջեի մասով – ----

2. Ծախսերի գծով – 5494.9 հազար դրամ

Այդ թվում՝

--վարչական բյուջեի մասով – 6218.0 հազար դրամ

--ֆոնդային բյուջեի մասով - -723.1 հազար դրամ:

Ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Բարսյան Տիգրան	<i>ՏԻԱՅ</i>		
Դալլաբյան Վազգեն	<i>ՎԱԶԳ</i>		
Խոյեցյան Հովհաննես	<i>ՀՈՎԻ</i>		
Մկրտչյան Սաթենիկ	<i>ՄՍԻՆ</i>		
Շահինյան Անդրանիկ	<i>ՇԱԿ</i>		

Համայնքի ղեկավար



Վ.Մկրտչյան